նութեամբ պատահեցան Մոսկովի զօրքն մեր թագաւորի զօրացն. և էին Մոս-
քովցիքն 30,000 հոգի, և սոքա 16,000 հոգի, և հարին ընդ միմեանս. և խ-
կոյն ժամու սոքա զնոսա կոտորեցին մինչեւ իսպառ. զոր ոչ ոք փախեաւ
ի Մոսքովի զօրաց. զամենեսեան սատակեցին։ Եւ աստ կատարեցաւ մար-
գարէութիւն պարագլուխ մարգարէին Մովսէսի, եթէ, մինն զհազարս և եր-
կուքն զբիւրս. ի փառս Աստուծոյ։ Եւ յորժամ այս բարի քաջ և յաղթող
համբաւն եկաւ ի Կամենիցս, նայ մեծ ուրախութիւն և ցնծութիւն կատա-
րեցին քաղաքս, ամենայն քաղաքացիքն առ հասարակ զԱստուած օրհնեցին.
և նմա փառք և գոհութիւն մատուցին, որ տայ հաւատարիմ ծառայիցն այս-
պիսի քաջայաղթութիւն։ Բայց Ռուս ազգն լցան նախանձու, և ոչ կատա-
րեցին զայս ցնծութիւն, և նա և ոչ Աստուծոյ գոհութիւն մատուցին. վասն
զի թագաւորին մերոյ թշնամիք են և ամենայն հաւատացեալ քրիստոնէից։
Բայց հատուսցէ նոցա Տէր ըստ չարութեան սրտից նոցա։

1562. Թվ. ՌԺԱ. Դեկտ. ԺԸ. Ի ժամանակին Տեսրոթին երկրորդում ա-
մի պարոնութեան նմին, զԼաքին ուրացաւ և զիւր երդումն ստեց, զոր
բազում անկամ երդուաւ նմա ի վերայ Խաչելութեանն Քրիստոսի. զոր խոս-
տացել էր նմա զիւր երկրին զկէս պարոնութիւն, վասն նորա երախտաւորու-
թեան համար։ Եթէ որչափ ինչ արար ընդ նմա Բան Լաքին, զոր գրեալ
է ի մէջ այսմ թղթիս առաջագոյն. զոր կարող են հաւատարիմ ընթեր-
ցողքն ի միտ առնուլ զամենայն ինչն Բան Լաքին։ Իսկ նա իբրեւ ապ-
ստամբ ոք ուրացաւ զնա. և զԽոդինու բերդն էառ ի նմանէ. և զԲիսոցքին՝
զոր իշխանութեամբ Լաքին էր նստեալ ի մէջ բերդին՝ եհան. և զՕլախ
պոկալապներն եդիր ընդ իւր իշխանութեամբն։ Եւ այսպիսի նորա ապ-
ստամբութիւն իւր գլխոյ կորստեան նշանակ է. զոր անձամբ իւրով զանձն
իւր դատապարտեաց։

1562. Թվ. ՌԺԱ. Հայոց ազգիս Տէր Ստեփաննոս Արընճեցի կաթողիկոսն
եկաւ ի Կամենիցս, ստոյգ և ճշմարիտ ճանապարհաւ. և եկաց ի Կամենիցս՝
ի Հրեշտակապետացն մինչեւ ի Տնօրէութիւն Քրիստոսի. և ապա գնաց
յԻլով քաղաքն, և անդ ընդունելի և պատուելի եղաւ քրիստոնէից. և ա-
պա դարձեալ եկն ի Կամենիցս։ Եւ էին ընդ նմա Տէր Զաքարեայ եպիս-
կոպոս, և Տէր Դաւիթ վարդապետ, և Լուսիկ անուն սարկաւագ մի. զոր
մեզ եկին, և զՍ. Լուսաւորչին օրհնութիւն ետուն։ Բայց մեծ զարմանք
զմեզ կալաւ, որ ի յայս աշխարհս զՍ. Էջմիածնայ զկաթողիկոս տեսաք.
վասն զի յօրէ յորմէ հետէ զՍ. Էջմիածնայ աթոռն կարգել է Ս. Լուսա-
ւորիչն մեր Հայոց ազգիս՝ մինչեւ ցայժմ կաթողիկոս ի այս աշխարհս բնաւ
ոք չէր տեսեալ, զոր մերոյ տեսեալ, և Աստուծոյ փառս մատուցեալ. որ զմեզ
այնպիսի ճշմարիտ քահանայապետին տեսոյն արժանացոյց։

1563. Թվ. ՌԺԲ. Եկաւ Մոսքովի զնազն ի թագաւորի աշխարհն, և զԲո-
լոգքա քաղաքն էառ. բայց ոչ իւրով կարողութեամբ, այլ չար և վատ Ը-